

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ.....	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ.....	4
1.4. Առևտուր.....	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ.....	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ.....	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ.....	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.....	9
5.1. Բյուջեի եկամուտներ.....	9
5.2. Բյուջեի ծախսեր.....	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը.....	12
5.4. Պետական պարտք.....	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ.....	14
6.1. Գնաճ.....	14
6.2. Ավանդներ և վարկեր.....	14
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	17
8. ԱՄՓՈՓՈՒՄ.....	17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Կորոնավիրուսի համավարակի տարածման հետևանքները դեռևս չհաղթահարած՝ ՀՀ տնտեսությունը 2020թ. չորրորդ եռամսյակ մուտք է գործում նոր՝ առավել անորոշ շուկերի ազդեցությունների ներքո: Սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը, ինչպես նաև կորոնավիրուսի երկրորդ ալիքի ի հայտ գալը նոր մարտահրավերներ են ստեղծել առանց այդ էլ անկում ապրող տնտեսության համար՝ հետաձգելով և անորոշ դարձնելով տնտեսական վերականգնման սկիզբը և հնարավորությունները:

Ամբողջ հոկտեմբեր ամիսը Հայաստանն անցկացրեց ռազմական դրության և ակտիվ պատերազմական գործողությունների ներքո: Բնականաբար, այդ իրավիճակը, ինչպես նաև կորոնավիրուսի երկրորդ ալիքը չէին կարող ազդեցություն չունենալ տնտեսական ակտիվության ցուցանիշի վրա: Վերջինիս անկումը հոկտեմբեր ամսին՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, կազմել է 8.1%՝ սեպտեմբերի համապատասխան ցուցանիշի համեմատ վատթարանալով 0.6 տոկոսային կետով: Արդյունքում, կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի ցուցանիշը նույնպես վատթարացել է՝ հասնելով -6.7%-ի:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



Տնտեսական ակտիվության ցուցանիշի անկմանը հիմնականում նպաստել են առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար -4.7, -3.0 և -0.7 տոկոսային կետերով: Արդյունաբերության դրական նպաստման չափը փոքրացել է՝ նախորդ ամսվա 0.2 տոկոսային կետից դառնալով 0.1 տոկոսային կետ: Գյուղատնտեսության ոլորտում տնտեսական ակտիվության ցուցանիշը շարունակում է հրապարակվել եռամսյակային կտրվածքով, հետևաբար դրա՝ ՏԱՑ-ին նպաստման վերաբերյալ


կարող ենք ենթադրություն անել մնացորդային եղանակով, ինչը ցույց է տալիս, որ այն ունեցել է դրական նպաստում:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության 12-ամսյա փոքր դրական աճը չի պահպանվել հոկտեմբերին: Ամիսներ շարունակ անկման ցուցանիշից հետո սեպտեմբեր ամսին արդյունաբերության ոլորտում ակտիվության ցուցանիշը գրանցել էր դրական աճ, որը սակայն չի պահպանվել և հոկտեմբերին արդյունաբերության անկումը նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ կազմել է 3.0%: Արդյունքում, նվազել է


նաև կուտակային աճի ցուցանիշը: Այսպես՝ հունվար-հոկտեմբեր ամիսներին արդյունաբերության աճը նախորդ տարվա նույն ամիսների համեմատ կազմել է ընդամենը 0.5%, որը ընթացիկ տարվա ամենացածր արդյունքն է:

Այդ փոքր, սակայն դրական ցուցանիշը դեռևս պահպանվում է հանքարդյունաբերության շնորհիվ, որը հունվար-սեպտեմբեր¹ ամիսներին գրանցել է 16.7% աճ՝ ընդհանուր արդյունաբերությանը նպաստելով 3.0 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերության ենթաճյուղում նույն ժամանակահատվածում գրանցվել է 2.7% անկում, ինչն ընդհանուր արդյունաբերության աճը նվազեցրել է 1.8 տոկոսային կետով:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ենթաճյուղում գրանցվել է 0.4% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.1 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղը նվազել է 16.2 տոկոսով՝ ունենալով 0.2 տոկոսային կետ բացասական նպաստում:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ոլորտում տնտեսական ակտիվության կուտակային անկման տեմպը փոքր-ինչ մեղմվել է, սակայն դեռևս պահպանվում է բարձր մակարդակում: Ինչպես սեպտեմբեր ամսին, այնպես էլ հոկտեմբերին, շինարարության ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ գրանցել է փոքր աճ (հոկտեմբերին՝ 0.3%): Արդյունքում՝ շինարարության անկման տեմպն

¹ Հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

ընթացիկ տարվա տասը ամիսների ընթացքում փոքր-ինչ մեղմվել է՝ կազմելով 13.3% և ինն ամիսների ցուցանիշի համեմատ բարելավվելով 2.4 տոկոսային կետով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների անկման տեմպը հոկտեմբերին խորացել է, ինչը սպասելի էր՝ հաշվի առնելով առկա և նոր առաջացած շոկերը: Ինչպես ռազմական դրության և ակտիվ պատերազմական գործողությունների, այնպես էլ կորոնավիրուսի երկրորդ ալիքի պայմաններում ծառայությունների ոլորտում ակտիվությունը նվազել է: Հոկտեմբեր ամսվա անկումը նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ կազմել է 21%, ինչը սեպտեմբերի անկման ցուցանիշից 2.7 տոկոսային կետով ավելի մեծ է: Խորացել է նաև կուտակային անկման տեմպը՝ հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմելով 12.8%:

Հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով², ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է եղել «կացության և հանրային սննդի կազմակերպում», «տրանսպորտ» և «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղերի անկմամբ, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.6, 3.9 և 2.1 տոկոսային կետ: Ծառայությունների ոլորտում դրական դինամիկա ունեն միայն «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» և «տեղեկատվություն և կապ» ենթաճյուղերը, որոնց դասվող ծառայությունների ծավալներն աճել են համապատասխանաբար 7.4% և 7.6%՝ ընդհանուր ոլորտի աճին նպաստելով համապատասխանաբար 1.6 և 1.0 տոկոսային կետով:

² Հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ծավալների 12-ամսյա անկման ցուցանիշը հոկտեմբերին՝ սեպտեմբերի համեմատ գրեթե կրկնապատկվել է: Առևտրի ծավալները հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել են 20.9%՝ սեպտեմբերի 10.8% անկման դիմաց, ինչի արդյունքում հունվար-հոկտեմբերի անկումը խորացել է՝ կազմելով 12.5%: Այս միտումը կապված է պատերազմական իրավիճակի հետ, որի պայմաններում մարդիկ հետաձգում են իրենց սպառումը: Հոկտեմբերի սկզբին բնակչության կողմից որոշակի ակտիվություն էր նկատվում առաջին անհրաժեշտության ապրանքների շուկայում, որոնք պետք է ուղարկվեին Արցախի Հանրապետություն: Սակայն, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ այդ ակտիվությունը բավարար չի եղել առևտրի ծավալների անկման խորացումը կանխելու համար:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %




Արտահանման ծավալների անկումը վերջին ամիսներին ուներ փոքր նվազման տեմպ, սակայն հոկտեմբեր ամսին այն կրկին խորացել է: Ընթացիկ տարվա 10 ամիսների ընթացքում արտահանման ծավալների նվազման ցուցանիշը կազմել է -4.4%, որը հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշի համեմատ վատթարացել է 0.1 տոկոսային կետով՝ հոկտեմբեր ամսվա 5.4% անկման հետևանքով:

Հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով³ արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների» արտահանման 15.1%, «մանածագործական արտադրանքի» 24.9% և «պատրաստի սննդի արտադրանքի» 11.5% կրճատմամբ, որոնք ընդհանուր արտահանման աճին ունեցել են համապատասխանաբար 2.4, 1.7 և 2.6 տոկոսային կետերով բացասական նպաստում:

Արտահանման աճին հիմնական դրական նպաստում ունեցող ոլորտը շարունակում է մնալ հանքարդյունաբերությունը, որի աճը հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 17.5%, իսկ նպաստումը ընդհանուր արտահանման աճին կազմել է 4.9 տոկոսային կետ:

Նշենք, որ ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել են նախորդ ամիսների արտահանման ցուցանիշները, ինչի արդյունքում հունվար ամսվա արտահանման աճը 22.5%-ից դարձել է 22.4%, հունվար-հունիս ամիսների անկումը՝ -6.3%-ից դարձել է -6.4%, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսներին՝ -4.4%-ից դարձել է -4.3%

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



³ Հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Ներմուծման ծավալների անկումը օգոստոսին մեղմվել էր, սակայն սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին կտրուկ խորացավ՝ մոտենալով ապրիլ ամսվա ցուցանիշին: Այսպես՝ հոկտեմբերին ներմուծման ծավալների 12-ամսյա նվազումը նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ կազմել է 24.3%, իսկ կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների անկումը կազմել է 14.9%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ վատթարանալով 1.4 տոկոսային կետով:

Հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով⁴ ներմուծման նվազումը պայմանավորված է գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով ներմուծման նվազմամբ: Առավել խոշոր բացասական դերակատարում է ունեցել ավտոմեքենաների ներմուծման 65.0% կրճատումը, ինչը ընդհանուր ներմուծման կրճատմանը նպաստել է 7.4 տոկոսային կետով: Զգալի ազդեցություն են ունեցել նաև «թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղներ» (նվազումը՝ 50.9%) և «մանածագործական արտադրանք» (նվազումը՝ 22.8%) ապրանքախմբերի ներմուծման ծավալների անկումները, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.7 և 1.3 տոկոսային կետ:

Ներմուծման ծավալներին դրական նպաստում են ունեցել միայն «սարքեր և սարքավորումներ» ապրանքախմբի 8.3%, «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի 7.4%, և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբի 8.9% աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.3, 0.5 և 0.4 տոկոսային կետ:

ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել են նաև ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում հունվար-փետրվար ամիսների ներմուծման աճի ցուցանիշը 0.4%-ից դարձել է 0.3%, 0.1 տոկոսային կետով խորացել են հունվար-ապրիլ, հունվար-մայիս, հունվար-հունիս և հունվար-հուլիս ամիսների անկման ցուցանիշները, հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշը -12.6%-ից դարձել է -12.2%, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսներինը՝ -13.7%-ից դարձել է -13.5%

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


2020թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձի աճը դանդաղել է 1.6 տոկոսային կետով, և կազմել է 4.3%: Ընդ

⁴ Հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 6.3 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.1 տոկոսով⁵:


Հունվար-հոկտեմբեր ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 187,428.0 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 165,514.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 196,386.0 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., հունվար-հոկտեմբեր, %





4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է << դրամի արժևորում)



⁵ Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշի հաշվարկում (ապրիլից սկսած) ներառվել են նաև այն կազմակերպությունների տվյալները, որոնք COVID-19-ի հետևանքով աշխատողների մի մասին կամ ամբողջությամբ ուղարկել են չվճարվող հարկադիր պարապուրդի: Վերջիններիս աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն չեն վարձատրվել:



2020 թվականի հունվար-հոկտեմբերին ՀՀ դրամի միջին փոխարժեքի արժեզրկման տեմպը ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակել է արագանալ: Նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ հունվար-հոկտեմբերին ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 0.8%: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը նույնպես խորացել է և կազմել 1.5%: Նույն ժամանակահատվածում ՌԴ ռուբլու նկատմամբ նկատվում է ՀՀ դրամի արժևորման տեմպի արագացում, որը կազմել է 8.9%:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Տնտեսական ակտիվության անկման և ճգնաժամի խորացման պայմաններում բյուջեի եկամուտները շարունակում են նվազել, ինչի տեմպը, սակայն, փոքր-ինչ մեղմվել է: Հունվար-հոկտեմբեր ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 1.9%-ով՝ նախորդ ամսվա 6.4%-ի փոխարեն: Հարկային եկամուտները և պետական տուրքերը նվազել են 5.2%-ով՝ ունենալով 0.6 տոկոսային կետ բարելավում հունվար-սեպտեմբեր ամիսների անկման համեմատ: Նույն ժամանակահատվածում պետական բյուջեի պաշտոնական

դրամաշնորհները նվազել են 49.9%-ով, իսկ այլ եկամուտները աճել են 64.2%-ով: Պաշտոնական դրամաշնորհների նվազումը, ինչպես նախորդ ամիսներին, հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի (հիմնականում կապիտալ ծրագրերի) ցածր կատարողականով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների աճը 2020 թվականին, %



Հունվար-հոկտեմբեր ամիսներին հարկային եկամուտների նվազմանն ամենամեծ նպաստումն են ունեցել շահութահարկի (նվազումը՝ 16.5%), մաքսատուրքի (նվազումը՝ 29.4%) և ԱԱՀ-ի (նվազումը՝ 2.9%) անկումները, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի նվազմանը կազմել են համապատասխանաբար 2.1, 1.9 և 0.9 տոկոսային կետ:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, 2020թ.

	Հունվար-սեպտեմբեր		Հունվար-հոկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.8	-5.8	-5.2	-5.2
ԱԱՀ	-5.9	-2.0	-2.9	-0.9
Շահութահարկ	-17.5	-2.4	-16.5	-2.1
Եկամտային հարկ	1.9	0.5	1.3	0.4
Ակցիզային հարկ	1.7	0.1	0.5	0.0
Շրջանառության հարկ	-3.6	-0.1	-8.6	-0.2
Արտոնագրային հարկ	-98.8	-0.3	-98.9	-0.3

Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	2.8	0.1	-2.3	-0.1
Մաքսատուրք	-28.8	-1.8	-29.4	-1.9
Սոցիալական վճար	25.6	0.3	28.9	0.4
Այլ հարկային եկամուտներ	18.4	0.3	13.4	0.2
Պետական տուրք	-24.6	-0.7	-23.9	-0.7

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը հոկտեմբեր ամսին արագացել է: Հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընդհանուր պետական ծախսերն աճել են 19.8%-ով՝ կազմելով 1453.9 մլրդ դրամ: Ծախսերի կուտակային աճի տեմպը նախորդ ամսվա նկատմամբ արագացել է 3.0 տոկոսային կետով: Ընդհանուր ծախսերի դիսկրետ (12-ամսյա) աճը հոկտեմբեր ամսին նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ կտրուկ աճել է՝ կազմելով 39.3%, ինչը ենթադրաբար պայմանավորված է ռազմական ակտիվ գործողություններով:

Ընթացիկ ծախսերի դիսկրետ աճը կազմել է 15.2%՝ ապահովելով կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների 15.0% աճի ցուցանիշը, իսկ կապիտալ ծախսերի դիսկրետ աճը կազմել է 239.2%, այսինքն՝ հոկտեմբերին նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ կապիտալ ծախսերն աճել են ավելի քան 3.3 անգամ: Հենց կապիտալ ծախսերի աճն է ապահովել ընդհանուր ծախսերի վերոհիշյալ կրտուկ աճը, և ենթադրաբար այն կապված է պատերազմի ֆինանսավորման

անհրաժեշտությամբ: Սա իհարկե չի հանգեցնի կապիտալ ծախսերի կատարողականի բարելավմանը, քանի որ փաստացի ծախսերի աճին զուգահեռ կառավարությունը կմեծացնի նաև ճշտված պլանի ցուցանիշը:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պայմանավորված եկամուտների նվազմամբ և ծախսերի կտրուկ աճով՝ պետական բյուջեի պակասուրդը հոկտեմբերին կտրուկ մեծացել է: 2020թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին պետական բյուջեի պակասուրդը կազմել է 205.9 մլրդ դրամ՝ մեկ ամսվա ընթացքում աճելով մոտ 51.1 մլրդ դրամով: Ընդ որում, պակասուրդի ցուցանիշը, փաստորեն, նույնպես պայմանավորված է պատերազմական գործողություններով, ինչի արդյունքում այն գերազանցել է պետական բյուջեի ճշտված պլանով 6 ամիսների համար նախատեսված 193.5 մլրդ դրամը, սակայն դեռևս հեռու է 9 ամսվա պլանային ցուցանիշից:

5.4. Պետական պարտք


2020թ. հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7,967.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ աճելով 12.1%-ով: Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքը հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 7,499.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 13.6%-ով: Աճը տեղի է ունեցել հիմնականում ներքին պարտքի աճի հաշվին, որն աճել է 30.0%-ով՝ արտաքին պարտքի 8.6% աճի պայմաններում:

Նախորդ ամսվա նկատմամբ կառավարության պարտքն աճել է 124.6 մլն ԱՄՆ դոլարով (ընդ որում, արտաքին պարտքը նվազել է 3.7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ ներքին պարտքն աճել է 128.3 մլն ԱՄՆ դոլարով) կամ 1.7%-ով:

2020թ. ընթացքում (2019թ. դեկտեմբերի համեմատ) ՀՀ կառավարության պարտքն աճել է 664.3 մլն ԱՄՆ դոլարով, որից 192.6-ը՝ արտաքին, իսկ 471.7-ը՝ ներքին պարտքի հաշվին:

Պարտքի աճի տեմպը հոկտեմբերին կրկին սկսել է արագանալ, ինչը հիմնականում պայմանավորված է ծախսերի կտրուկ աճով: Այս պարագայում, կառավարության կողմից պետական բյուջեի ծախսերի վերանայումը և օպտիմալացումը էլ ավելի է կարևորվում, քանի որ նման տեմպերով զարգացումների շարունակությունը կարող է հանգեցնել լուրջ հարկաբյուջետային ռիսկերի:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Հոկտեմբերին գրանցվել է 12-ամսյա գնաճի որոշակի դանդաղում, որի պայմաններում գնաճային միջավայրը դեռևս մնում է բավական ցածր: Գնաճի արագացման միտումը, որը սկսվել էր ապրիլ ամսից, արդեն մարել է, և նկատվում է հակառակ՝ գնաճի դանդաղման միտում: Հոկտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 1.3%: Սեպտեմբերին ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի և մեկ անգամ իջեցումը բավարար չի եղել գների նվազմանը հակազդելու համար, և գնաճը մնացել է ԿԲ-ի ստորին թիրախից բավական ցածր մակարդակում:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2020թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը կտրուկ նվազել է: Այս միտումը հատկապես նկատվել է հոկտեմբերին, երբ ավանդների աճի տեմպը նվազել է 4.2 տոկոսային կետով և կազմել 4.9%: Սա կարող է բացատրվել պատերազմական իրավիճակով, որի պայմաններում կտրուկ աճել են անորոշությունները:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճի կառուցվածքում, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, ակնհայտ է ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների նպաստման փոփոխությունը, որը 8.2 տոկոսային կետից դարձել է -0.2: Նվազել են նաև տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալների նպաստումները, որոնցից առավել ակնհայտ է տնային տնտեսությունների ավանդների նպաստման փոքրացումը, որը 5.4 տոկոսային կետից հասել է 2.0 տոկոսային կետի:


Վարկերի աճի դանդաղման տեմպն առավել նկատելի է դարձել: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 17.6 տոկոսով՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ նվազելով 1.6 տոկոսային կետով: Վարկերի աճի բարձր տեմպը պայմանավորված էր նաև կառավարության տնտեսական օժանդակության ծրագրերով, սակայն դրանց վերաբերյալ փաստացի տեղեկատվություն չի հրապարակվում: Վարկերի աճի տեմպի նվազումը նույնպես կարող է պայմանավորված լինել կառավարության

տնտեսական օժանդակության ծրագրերով, որոնց հիմնական ծավալը սպառվել է՝ փաստացի հանգեցնելով տնտեսությանը աջակցության դադարեցմանը:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ




Վարկերի աճին բոլոր ոլորտների նպաստումները մոտեցել են իրենց արժեքներով: Հիմնական նպաստող ոլորտները շարունակում են մնալ արդյունաբերության ոլորտի, հիպոթեքային և ծառայությունների ոլորտի վարկերը՝ համապատասխանաբար 4.1, 3.6 և 2.7 տոկոսային կետ նպաստումներով: Սպառողական վարկերի նպաստումը նախորդ տարվա համեմատ էականորեն նվազել է՝ 7.9 տոկոսային կետից հասնելով 2.2-ի, ինչը տնտեսությունում պահանջարկի նվազման ցուցիչ է:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ-ում համաճարակային իրավիճակը կտրուկ վատթարացել է հոկտեմբեր ամսին, ինչը կարելի է համարել համավարակի երկրորդ ալիք: Ամսվա ընթացքում նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը կազմել է 1273 դեպք, այն դեպքում, երբ սեպտեմբերին այդ ցուցանիշը կազմում էր 219, իսկ հունիս-հուլիս ամիսներին՝ 420 դեպք: Այսինքն՝ հոկտեմբերին ոչ միայն հիվանդության երկրորդ ալիքն է սկսվել, այլև այն մոտ 3 անգամ ավելի խիստ է ընթանում, քան առաջին ալիքի դեպքում էր: Առավել մտահոգիչ է իրավիճակը նոյեմբերին: Օրական դեպքերի միջին թիվը հասել է 1571-ի, իսկ մահվան դեպքերը հասել են օրական միջին հաշվով 28-ի, այն դեպքում երբ հունիս-հուլիս ամիսներին այդ ցուցանիշը կազմում էր 10, իսկ սեպտեմբերին՝ 12:

Արդյունքում՝ նոյեմբերի 25-ի դրությամբ ընդհանուր գրանցված դեպքերը կազմում են ավելի քան 129 հազար, իսկ մահվան դեպքերը՝ 2040: Մեկ մլն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 11-րդ տեղը, իսկ մահվան դեպքերի թվով՝ 21-րդը:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության դեպքերը



8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Հունվար-հոկտեմբեր ամիսների տնտեսական ակտիվության անկումը կրկին խորացել է՝ հասնելով -6.7%-ի՝ պայմանավորված նոր շուկերի առկայությամբ:** Պատերազմը և կորոնավիրուսի երկրորդ ալիքը խոշոր հարվածներ են հանդիսանում առանց այդ էլ ծանր վիճակում գտնվող ՀՀ տնտեսության համար, որոնց բացասական հետևանքները կարող են երկար ժամանակ տեսանելի լինել: Առավել մտահոգիչ է այն, որ ստեղծված իրավիճակում

աննախադեպ չափերի են հասել անորոշությունները: Երկրում կարծես բացակայում է տնտեսական որևէ քաղաքականություն, ինչը կհանգեցնի նրան, որ տնտեսավարող սուբյեկտները կհետաձգեն կամ կչեղարկեն իրենց պլանները անորոշ ժամկետով: Արդյունքում, տնտեսության վերականգնումը կդառնա ավելի անորոշ և երկարաձգված:

2. **Պետական բյուջեի ծախսերը կտրուկ աճել են հոկտեմբերին՝ առաջացնելով պակասուրդի աճ:** Տնտեսական ծանր իրադրության պայմաններում, բյուջեի պակասուրդի, հետևաբար նաև պարտքի աճը կարող է լուրջ վտանգներ ստեղծել հարկաբյուջետային կայունության տեսանկյունից: Վերջինիս վտանգումը անթույլատրելի է նման իրավիճակում, քանի որ պատերազմի բացասական ելքի պայմաններում կաճի նաև ՀՀ երկրի դիսկը՝ դժվարեցնելով արտաքին ֆինանսավորման ներգրավումը: Այդ իսկ պատճառով, առավել քան երբևէ, անհրաժեշտություն է առաջացել վերանայել պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ: Պետք է հնարավորինս բացառել տնտեսական աճին չնպաստող և սոցիալական խնդիրներ չլուծող ծախսերի առկայությունը՝ նվազեցնելով պետական պարտքի աճի ուղղությամբ ճնշումները:

3. **Կապիտալ ծախսերի թերակատարման չլուծված խնդրի բացասական ազդեցություններն արդեն իսկ տեսանելի են, իսկ դրա հետագա առկայությունը տնտեսական վերականգնմանը խանգարող ևս մեկ գործոն կդառնա:** Կառավարությունը երկուսից ավելի տարիներ աշխատում է կապիտալ ծախսերի պատշաճ մակարդակով իրականացման անկարողության պայմաններում: Դա անթույլատրելի է, քանի որ յուրաքանչյուր չիրականացված կապիտալ ծրագիր թուլացնում է երկրի տնտեսությունը և մեծացնում շուկերի ազդեցության չափը: Ընթացիկ տարվա հոկտեմբերին կապիտալ ծախսերը զգալի աճել են, սակայն դրանք ենթադրաբար պայմանավորված են ռազմական ծախսերի աճով, որոնք տնտեսական պոտենցիալը չեն մեծացնում: Հետևաբար այս խնդրի լուծման համար ջանքերը պետք է կրկնապատկել:

4. **Ֆինանսական համակարգի կայունության վտանգներ են սկսել ի հայտ գալ:** Մի կողմից՝ ՀՀ դրամի արժեզրկման տեմպի արագացումը, մյուս կողմից՝ ավանդների դուրսբերումը բանկային համակարգից լուրջ մարտահրավեր են խիստ անբարենպաստ տնտեսական միջավայրում գործող ֆինանսական համակարգի համար: Ֆինանսական համակարգի նկատմամբ, այլ կառույցների համեմատությամբ, դեռևս պահպանվում է ինչպես տնտեսավարողների, այնպես էլ բնակչության վստահությունը: Այս համակարգում կայունության խաթարումը կվերացնի նաև այդ վստահությունը՝ չափազանց բացասական հետևանքներ ունենալով տնտեսական համակարգի և սոցիալական իրավիճակի տեսանկյունից: Հետևաբար, այստեղ կարևոր է Կենտրոնական բանկի դերը՝ իրավիճակը ճիշտ գործիքակազմով կայունացնելու և վստահության անկում թույլ չտալու գործում:

5. **Համաճարակային իրավիճակը ՀՀ-ում հասել է ահագնացնող մակարդակի:** Կորոնավիրուսով վարակման հաստատված դեպքերի, ինչպես նաև մահվան օրական միջին թվերը կտրուկ աճել են հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Սակայն, կառավարության կողմից այս հարցը նույնպես մատնված է անտարբերության, և ոչ մի տեսանելի քայլ չի ձեռնարկվում իրավիճակի կարգավորման համար: Բնականաբար սա նույնպես մեծացնում է անորոշությունը՝ վտանգելով տնտեսական վերականգնման հեռանկարները:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: